ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԱՎԱՆԻ ԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 23-Ն

<< 22 >> դեկտեմբերի 2016 թվական գյուղ Անիավանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիավանի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիավանի համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիավանի համայնքի ավագանու 2013 թվականի մարտի 6-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիավանի համայնքի 2013-2016 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> թիվ 4-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղրամյան Մանվել .....

Միեր Պետրոսյան .....

Արայիկ Ղազարյան .....

Արսեն Նիկոյան .....

Միեր Տոնոյան .....

ԱՆԻԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. Միրոյան

<<22>> դեկտեմբերի 2013 թվական գյուղ Անիավան

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անիավանի համայնքի
ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ի
թիվ 23 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԱՆԻԱՎԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՆԻԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԿԱԶՄԵՑ՝ ԱՆԻԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՐՈՅԱՆԸ:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 23-Ն ՈՐՈՇՄԱՄԲ:

ԳՅՈՒՂ ԱՆԻԱՎԱՆ - 2016 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
1.5.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ
1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1.11.ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
1.12.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
1.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
1.14.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
1.16.ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
1.17.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1.18.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1.Համայնքի ռազմավարությունն է.
1.2.Հիմնական նպատակները

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1.ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՎԵՐՋԻՆ 3
3.2.ՏԱՐԻՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
3.3.ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 10 3.4
3.4.ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ ՄԱՍԻՆ

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՁՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ,
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՈՒՄ

5.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄԱՅԱ ԾՐԱԳՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ. թիվ 1.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<< Շիրակի մարզի Անիավան համայնքի 2017-2021 թթ համալիր զարգացման ծրագիրը մշակված է << սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է համայնքի համալիր զարգացմանն ուղղված ուղեցույց փաստաթուղթ:

Ծրագրի հիմքում դրված են համայնքում առկա առաջնային հիմնախնդիրների լուծմանն ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքում մատուցվող ծառայությունների ծավալների ավելացմանն ուղղված համայնքի ղեկավարի նախընտրական ծրագրի դրույթներն ու համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները : Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն համայնքի զարգացմանն ուղղված ուղեցույց փաստաթուղթ է, որը կարող է հաշվի առնվել կառավարության տարածքային զարգացման քաղաքականության, գյուղական հանայնքների համաչափ զարգացման, աղքատության կրճատման և մարզի զարգացման ռազմավարական ծրագրերում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ֆինասական ռեսուրսները և առաջարկված ծրագրերից ակնկալվող արդյունքները, կատարվել են իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում արտաքին և ներքին գործոնների ազդեցությունից ենթադրվում են համապատասխան փոփոխություններ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Անիական համայնքը հիմնադրվել է 1902 թվականին , որպես Գյումրի - Երևան երկաթուղու կիսակայարան և Անի պատմական մայրաքաղաքին մոտ գտնվելու պատճառով անվանվել է Անի կայարան: Բնակավայրի առաջին բնակիչները եղել են կիսակայարանում աշխատանքի բերումավ տեղափոխված 4 - 5 ընտանիքները: Բնակավայրը իր հիմնադրման պահից ընդգրկվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921 թվականին բնակավայրը ընդգրկվում է Խորհրդային Հայաստանի կազմում և վարչատարածքային շրջանային բաժանումից հետո, 1936թվականին՝ Անիի շրջանի կազմում: 1996թվականից << վարչատարածքային վերջին բաժանումից հետո Անի կայարանը ստացավ գյուղական համայնքի կարգավիճակ և որպես վարչատարածքային առանձին միավոր՝ ընդգրկվեց Շիրակի մարզի կազմում: 2006թվականին Ազգային ժողովի կողմից ընդունված համապատասխան որոշման համաձայն Անի կայարանը վերանվանվել է Անիական :

Խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1926թ. հիմնադրվել է «ԱՆԻ ՏՈՒՖ» քարի արտադրության և վերամշակման ձեռնարկությունը և աշխատատեղեր բացվելու կապակցությամբ տարեցտարի ավելացել է բանվորական ավան տեղափոխվող ընտանիքների թիվը: Համայնքի բնակչության 50 տոկոսից ավելին հարևան Բագրավան / նախկինում Բուղդաշեն / և Նորշեն / նախկինում Խարկով / գյուղերից տեղափոխված բնակիչներն են :

Բնակավայրը հատկապես զարգացում է ապրել 1950 - ական թվականներից հետո: Կառուցվել են 9 բազմաբնակարան բնակելի շենքեր՝ 18 բնակարաններով, կառուցվել է դպրոց , մշակույթի տուն, հետագայում մանկապարտեզ, առևտրի և բնակչության սպասարկման առանձին օբյեկտներ: 70-80-ական թվականներին համայնքում հիմնադրվում են հացահատիկի մթերումների կայանը , «Ստրոմաշինա» գործարանի մասնաճյուղը և կերամիկական իրերի արտադրամասը:

Բնակավայրը լինելով բանվորական ավան, իր հիմնադրման օրվանից առ այսօր, գյուղատնտեսական նշանակության հողեր չի ունեցել: Բնակավայրը իր հիմնադրման օրվանից չի ունեցել նաև խմելու ջրի կենտրոնացված կամ սեփական համակարգ և խմելու ջուրը տեղափոխվում է ավտոցիստերնների կամ վագոն - ցիստերնների միջոցով , իսկ ոռոգման և կենցաղային կարիքների համար ջուրը պոմպակայանի միջոցով հանվում է բնակավայրի հարևանությամբ գտնվող Ախուրյան գետից:

Բնակավայրի սոցիալ – տնտեսական թույլ զարգացածությունը և բնակչության ցածր կենսամակարդակը հիմնականում պայմանավորված է խմելու ջրի և գյուղատնտեսական նշանակության հողերի բացակայությամբ:

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Անիական գյուղական համայնքը տեղաբաշխված է Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին, Շիրակի դաշտավայրի հարավ-արևմտյան և Թալինի սարավանդակի հյուսիսային մասում, Ախուրյան գետի արևմտյան ափին:

Թուրքիայի սահմանից գտնվում է 4 կմ. հեռավորության վրա: Սահմանակից է Բագրավան և Անիպեմզա համայնքներին :

Ծովի մակերևույթից գտնվում է 1460 մ. բարձրության վրա: Բնակավայրը ընդգրկված է հանրապետության նախալեռնային բնակավայրերի ցանկում:

Բնակավայրին առանձնահատուկ են ցուրտ, ձյունառատ ձմեռները և զով ամառային եղանակները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 8 - 9 աստիճան: Տարեկան միջին տեղումները կազմում են 350-600մմ., որոնք առանձնահատուկ են ապրիլ-մայիս և հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներին:

Բնակավայրը մշտապես վտանգված է կարկտահարությամբ և տևական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 86.7հա., որից 41.3հա բնակավայրի հողեր են, 29.9 հա. գյուղատնտեսական նշանակության հողեր են , իսկ 15.6 հա. արդյունաբերական նշանակության և ճանապարհների տակ գտնվող հողեր են:

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 50կմ., մարզկենտրոնից 45կմ. և մայրաքաղաքից՝ 107կմ. հեռավորության վրա: Բնակավայրով է անցնում Գյումրի-Արմավիր- Երևան հանրապետական նշանակության ճանապարհը և Գյումրի - Երևան երկաթուղին :

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն պատմական տեղեկությունների բնակավայրը հիմնադրվել է 1002 թվականին Թբիլիսի - Երևան երկաթուղու վրա կառուցված Անի կիսակայարանում աշխատանքի բերումով տեղափոխված 4 - 5 ընտանիքների կողմից: Բնակավայրից 4կմ. հեռավորության վրա գտնվող Անիպեմզա կոմբինատի գործարկումից հետո կիսակայարանի բարձման - բեռնաթափման հզորությունները ավելացել են,որի հետ մեկտեղ ավելացել է նաև բնակչության թիվը:

1926թ. հիմնադրվել է «Անի տուֆ» քարի արտադրության և վերամշակման ձեռնարկությունը և աշխատատեղեր բացվելու կապակցությամբ տարեցտարի ավելացել է

բանվորական ավան տեղափոխվող ընտանիքների թիվը: Համայնքի բնակչության 50 տոկոսից ավելին հարևան Բագրավան / նախկինում Բուղդաշեն / և Նորշեն / նախկինում Խարկով / գյուղերից տեղափոխված բնակիչներն են :

Հայրենական Մեծ պատերազմից հետո բնակավայրի բնակչության թիվը կտրուկ նվազել է : Համայնքը առավելագույն բնակչություն՝ մոտ 700 մարդ է ունեցել է 1960-ական թվականներին:

Համաձայն 2016 թ. հունվար ամսի հաշվառման բնակավայրն ունի ժողովրդագրական հետևյալ տվյալները՝

- Բնակչությունը – 488
  Այդ թվում՝
- Տղամարդ – 218
- Կին – 270
- Ընտանիքների թիվը - 88
- Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 – 5 տարեկան / – 26
- Դպրոցական տարիքի երեխաներ / 7 – 18 տարեկան / – 33
- Հասուն տարիքի բնակչություն/18 – 65 տարեկան/ – 315
- Տարեց բնակչություն / 65 և ավելի / – 117
- Ընտրողների թիվը – 313
- Կենսաթոշակառուների թիվը – 52
- Հայրենական պատերազմի մասնակիցներ - 0
- Մանկուց հաշմանդամներ – 3
- Ազատամարտիկների – 2
- Բռնազաղթվածներ – 0
- Նպաստառու ընտանիքներ – 18
- Աշխատունակ բնակչություն – 312
- Զբաղբածների թիվը - 137
- Այլազգիներ – 0
- Գործազուրկների թիվը – 64

Վերջին 10 տարիներին արձանագրվել է համայնքի բնակչության թվի 15 տոկոսի նվազում, համայնքի աշխատունակ բնակչության 30 տոկոսը մեկնում է արտագնա աշխատանքի:

1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի / ավագանու 5 անդամ / և համայնքի ղեկավար: 2016թ հոկտեմբերի 2-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով համայնքի ղեկավար է ընտրվել Մարտիրոս Միրոյանը:

« Տեղական ինքնակառավարման մասին » և «Համայնքային ծառայության մասին » << օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի հետևյալ կառուցվածքով.

Համայնքային ծառայության պաշտոններ՝

- Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար – 1 միավոր
- Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ – 1 միավոր
- Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ - 1 միավոր

Հայեցողական պաշտոն

- Համակարգչային օպերատոր – 1 միավոր

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անուն, ազգանուն	Ծնն.թիվը	Կրթություն	Կուս.պատկան.
1	Մանվել Բաղրամյան	1959թ	բարձր.	անկուս.
2	Մհեր Պետրոսյան	1991թ	բարձր.	անկուս.
3	Հրայր Ղազարյան	1983թ	միջ. մասնագ.	անկուս.
4	Հրանտ Հարությունյան	1972թ	միջնակ.	անկուս.
5	Մհեր Մոնոյան	1986թ	միջնակ.	անկուս.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

N	Անուն, ազգանուն	Պաշտոնը	Կրթությունը	Ծննդ.թիվը
1	Մարտիրոս Միրոյան	Համայնքի ղեկավար	միջ. մաս.	1966 թ.
2	Սերգեյ Ղազարյան	Աշխատակազմի քարտուղար	բարձրագ.	1954 թ.
3	Գարիկ Պետրոսյան	Առաջատարմասնագ.հաշվապ.	բարձրագ.	1988 թ.
4	Մարսելա Հարության	Առաջին կարգի մասնագետ	միջ.մասնագ	1983 թ.
5	Աստ Պետրոսյան	հանձնակատար. օգնականներ	միջնակարգ	1960 թ.

« Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել են մշտական գործող հետևյալ հանձնաժողովները՝

- Վարչական հարցերի հանձնաժողով
- Անչափահասների հարցերի հանձնաժողով
- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով
- Սոցիալական ապահովության հարցերի հանձնաժողով:

Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը և ներքին հարաբերությունները գրաֆիկական տեսքով ներկայացված է թիվ 1 հավելվածում:

1.5.ՀԱՄԱՅՄՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. « ՀՀ համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» թիվ 51 որոշմամբ:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի: Քայքայված և անբարեկարգ վիճակում է մշակույթի տունը, գրադարանի և մանկապարտեզի շենքերը:

Կենտրոնացված ջրամատակարարման բացակայության պատճառով խմելու ջրի 10 կմ. ընդհանուր երկարության ներհամայնքային ցանցը և 420 խ. մ. տարողության օրվա կարգավորման 1 ջրամբարը չի շահագործվում:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են 3 կմ. ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները:

Համայնքապետարանը չունի շենքային հարմարություններ և որպես գրասենյակ օգտագործում է դպրոցի շենքի 2 աշխատասենյակները:

Համեմատաբար բարվոք վիճակում է գյուղի բուժ. մանկաբարձական կետը,որը նորոգվել է «ՆՈՎԱ» բարեգործական կազմակերպության և համայնքի կողմից կատարված ներդրումների միջոցով:

Համայնքի սեփականության.գույքի ցանկը ներկայացված է թիվ 2 հավելվածում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

N	Գույքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Տեխնիկական վիճակի բնութագիր
1	Մշակույթի տուն	հատ	1	Ենթակա է հիմնանորոգման
2	Մանկապարտեզի շենք	հատ	1	Ենթակա է հիմնանորոգման
3	Խմելու ջրի ներտնտեսային ցանց	կմ	3.5	Ենթակա է հիմնանորոգման
4	Օրվա կարգավորման ջրամբար /420խ.մ.տարող/	հատ	1	Ենթակա է հիմնանորոգման
5	Բնակարանային ֆոնդ	ք.մ.	2290	Ենթակա է հիմնանորոգման
6	Գրադարան	հատ	1	Ենթակա է նորոգման
7	Գերեզմանատուն	հատ	1	Գարիք կա ցանկապատված
8	Ներհամայնքային ճանապարհներ	կմ	3.0	Ենթակա է հիմնանորոգման
9	Բուժ մանկաբարձական կետ	հատ	1	Նորոգված է
10	Գրասենյակային գույք	հատ	*	մաշված է
11	Գրադարանի գրքային ֆոնդ	կտոր	1750	մաշված է

1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բնակավայրը չունի կեղտաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգեր: Կեղտաջրերի հեռացումը համայնքում կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով: Բնակավայրում աղբահանությունը կատարվում է համայնքի բնակիչների կողմից անհատական նախաձեռնությամբ և սանիտարական օրեր կազմակերպելու միջոցով:

1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի բնակարանային տնտեսությունը ունի հետևյալ տեսքը.

Համայնքն բնակֆոնդը կազմում է 6450 ք.մ., որից 2250ք.մ. / 18 բնակելի տուն / անհատական սեփականության և 4200ք.մ. / 76 բնակարան / համայնքային սեփականության: Բնակավայրը գտնվելով 1988թ. «Սպիտակի» աղետալի երկրաշարժի գոտում և բնակֆոնդը ստացել է 2-3 աստիճանի վնասվածություններ: Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն համայնքի 34 ընտանիքներ:

Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերը գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, որի պատճառով առանձին բնակարաններ լքված են բնակիչների կողմից : Հատկապես հրատապ նորոգման կարիք ունեն շենքերի տանիքները:

Համայնքի բնակարանային տնտեսությունը ունի հետևյալ տեսքը.

h/h		Շենքերի քանակը / հատ /	Բնակարանների քանակը / հատ /	Ընդհանուր բնակմակերեսը / քառ.մ. /
1	*Համայնքային սեփականության բազմաբնակարան բնակելի շենքեր*	14	76	4200
	1 սենյականոց բնակարաններ	*	-	-
	2 սենյականոց բնակարաններ	*	30	1260
	3 սենյականոց բնակարաններ	*	40	2200
	4 և ավել սենյականոց բնակարաններ	*	6	740
2	*Կառուցման ժամկետները*			
	Մինչև 10տարի առաջ կառուցված	-	-	-
	11-20տարի առաջ կառուցված	-	-	-
	21-50տարի առաջ կառուցված	9	18	
	50 և ավելի տարի առաջ կառուցված	5	58	
3	*Անհատական առանձնատներ*	18	-	2250
	ԸՆԴԱՄԵՆԸ ԲՆԱԿՖՈՆԴ			6450

1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Համայնքն իր հիմնադրման (հիվանից մինչև 2010 թվականը չի ունեցել խմելու ջուրի մատակարարման կենտրոնացված կամ լոկալ համակարգ և խմելու ջուրը տեղափոխվել է ավտոցիստերնների ու վագոն ցիստերնների միջոցով: Համայնքի 3.5 կմ. ընդհանուր երկարության ջրամատակարարման ներտնտեսային ցանցը և 420 խ.մ. տարողության օրվա կարգավորման 2 ջրամբարները կառուցվել են 1970 - ական թվականներին և կենտրոնացված ջրատարի բացակայության պատճառով երբևէ չեն շահագործվել:

Համայնքի տնամերձ հողամասերի ոռոգման և բնակչության կենցաղային կարիքների համար ջուրը մատակարարվել է Անիպեմզա համայնքի պոմպակայանի միջոցով, սակայն պոմպակայանը էներգոտար լինելու պատճառով շուրջ 20 տարի է ինչ այն չի շահագործվում:

Ի ուրախություն Անիավանի համայնքի բնակիչների պետական բյուջեի 2009թվականի ծրագրում ընդգրկվեց Անիավան - Անիպեմզա համայնքների ջրամատակարարման համակարգի կառուցումը և 2010 թվականին կառուցվեց Բագրավան Անիավան-Անիպեմզա ջրատարը: Ծրագրի արրեքը կազմել է 137,0 մլն. դրամ: Բնակավայրի ջրամատակարարումն իրականացվում է Բագրավան համայնքի տարածքում գտնվող խորքային հորի և մղող պոմպի միջոցով: Ներկայում բնակավայրի ջրաատակարարումն իրականացվում երկու օրը մեկ անգամ՝ 2-3ժամ տևողության ժամային գրաֆիկով: Վերանորոգման և ընդլայնման կարիք ունի ջրամատակարարման ներքին ցանցը և օրական կարգավորման ջրամբարները: Ջրամատակարարման էներգոտար լինելու պատճառով համայնքում լուրջ դժվարություններ կան խմելու ջրի վարձավճարների հավաքագրման հարցում:

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ

Բնակավայրով անցնող Գյումրի - Արմավիր - Երևան հանրապետական նշանակության ճանապարհը ասֆալտապատ է , որը համայնքի համար հանդիսանում է և միջհամայնքային և մարզկենտրոնի հետ կապող ճանապարհ:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ներհամայնքային 3կմ ընդհանուր երկարության ճանապարհները:

Բնակավայրը ունի փոստային բաժանմունք, տեղական և քջջային հեռախոսակապ:

Բնակավայրը ընդունում է 4 հանրապետական և 3 մարզային հեռուստաալիքներ:

Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապը ապահովվում է միկրոավտոբուսի 2 երթուղու միջոցով : Մայրաքաղաքի և համայնքների հետ կապը ապահովվում է Մարալիկ-Արմավիր-Երևան երթուղային ավտոբուսի միջոցով:

1.10.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է, որը սակայն չի հանգեցրել սոցիալական այնպիսի ինստիտուտների ձևավորմանը, ինչպիսիք են միությունները, միավորումները, նախաձեռնող խմբերը և այլն: Բնակչությունը ներտ կապեր ունի մոտակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցության կապեր ունի հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների հետ:

Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Ծիրակի թեմի Առաջնորդարանի հետ:

1.11.ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 135,7 հա է, որից

1. Գյուղ. նշանակության հողեր – 30 հա.

այդ թվում՝

- վարելիհող – 7 հա.
- արոտ 70,51 հա
- գյողատնտեսական նշ. այլ հողեր – 1 հա.

2. Բնակավայրի հողեր – 41.3 հա.
3. Արդյունաբերական, արտադրական նշանակության հողեր 9.2 հա.
4. Մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր – 0.5 հա.
5. Էներգետիկայի, կապի և կոմունալ նշանակության հողեր – 0.9 հա.

1.12. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում գործում են տուֆ քարի արդյունահանման և վերամշակման 2 ձեռնարկություններ՝

- « Միրոյան տուֆ » ՍՊԸ
- « Քար և ավազ , ոչ հանքային հանածոներ» ՓԲԸ

« Անի » տեսակի տուֆ քարը մեծ պահանջարկ ունի հանրապետությունում և ներկայումս համայնքը ունի բավարար աշխատանքային ռեսուրսներ և տեխնիկական հագեցվածություն քարի արտադրության և վերամշակման ճյուղը զարգացնելու համար: Ներկայումս համայնքում գործող արտադրական ձեռնարկություններում աշխատում են 84 մարդ , որից 63 – ը համայնքի բնակիչներ են:

1.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքը իր հիմնադրման օրվանից գյուղատնտեսական նշանակության հողեր չի ունեցել, համայնքի բնակչությունը չի օգտվել հողերի սեփականաշնորհումից և համայնքում գյուղացիական տնտեսություններ չեն կազմավորվել: Համայնքի բնակչությունը բազմիցս հարց է ներկայացրել հանրապետության իշխանության մարմիններին՝ հարևան Բագրավան համայնքի համայնքային սեփականության վարելահողերից և արոտներից Անիավան գյուղական համայնքին հող հատկացնելու խնդրանքով, սակայն մինչև օրս հարցը դրական լուծում չի ստացել:

Համայնքի առանձին ընտանիքներ զբաղվում են անասնապահությամբ, սակայն գնովի կերերի բազայի վրա այս ճյուղը շահութաբեր չէ և առանց գյուղատնտեսական նշանակության հողերի այս ճյուղը համայնքում չի կարող զարգանալ: Տնտեսությունների կողմից պահվում են 133 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 82, մանր եղջերավոր անասուններ՝ 58, հավեր՝ 1100 Առանձին տնտեսություններ զբաղվում են մեղվաբուծությամբ և նրանց կողմից պահվում է 206 մեղվաընտանիքներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1. Անասնագլխաքանակը

/ գլուխ /

Գյուղ. կենդանիների տեսակները	Չափի միավոր	01.01.2013թ.
Խոշոր եղջերավոր անասուններ	գլուխ	133
որից՝ կովեր	գլուխ	82
Խոզեր	գլուխ	27
Ոչխարներ և այծեր	գլուխ	58
Թռչուններ	թև	1100
Մեղվաընտանիքներ	հատ	206

1.Անասնապահական մթերքների արտադրության համախառն ծավալները և անասունների մթերատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	Չափի միավոր	2016թ.
Մսի իրացում	տոննա	8.340
Կաթի արտադրություն,	տոննա	110.7
Բրդի արտադրություն	տոննա	0.1
Ձվի արտադրություն	հազ. հատ	13.7
1 կովի կաթնատվությունը	կգ	1350
1 տավարի միջին մսատվությունը	կգ	132
1 ոչխարի բրդատվությունը	կգ	2.0
1հավի ձվատվությունը	հատ	125

1.14.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի հանրակրթական մեկ դպրոց, որտեղ սովորում է 37 աշակերտ: Դպրոցում աշխատում են 12 մանկավարժներ , որից 7 - ը ունեն բարձրագույն կրթություն: Դրոցի շենքը ընթացիկ նորոգման կարիք ունի:

Համայնքի միակ մշակութային օջախը Մշակույթի տունն է : Մշակույթի տունը կառուցվել է 1950- ական թթ. և մինչև օրս հիմնական նորոգման չի ենթարկվել: Շենքի քայքայվածության և անբարեկարգ վիճակի պատճառով այն գրեթե չի օգտագործվում և չի ծառայում համայնքի կարիքների համար: Ներկայումս մշակույթի տանը ժամանակավոր բնակություն են հաստատել բնակարանի կարիքավոր համայնքի 4 ընտանիքներ:

Մանկապարտեզի շենքը նույնպես գտնվում է քայքայված ու անբարեկարգ վիճակում:

Համայնքում համապատասխան հարմարություններ չկան համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման, երեխաների մշակութային և գեղագիտական դաստիարակության համար:

Միջոցների բացակայության պատճառով համայնքը չի կարող սեփական նախաձեռնությամբ կազմակերպել համայնքի մշակույթի տան և մանկապարտեզի շենքի նորոգման և գույքային համալրման աշխատանքները:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումը իրականացվում է Աղինի առողջության կենտրոնի և համայնքի բուժ. մանկաբարձական կետի միջոցով: Համայնքի բուժ. մանկաբարձական կետը նորոգվել է «ՆՈՎԱ» ծրագրի աջակցությամբ և համայնքի կողմից կատարված ներդրման շնորհիվ:

1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Տուֆ քարի արտադրության և վերամշակման 2 ձեռնարկությունների առկայությունը
- Տուֆ քարի արտադրության և վերամշակման ճյուղի զարգացման համար աշխատանքային ռեսուրսների և տեխնիկական միջոցների առկայությունը.
- Գյումրի-Արմավիր մայրուղու հարևանությամբ գտնվելը.
- Երկաթուղային կայարանի առկայությունը.
- Բարձրագույն և միջնակարգ կրթությամբ մասնագետ կադրերի, բանվորական աշխատուժի առկայությունը.
- Պատմական ԱՆԻ քաղաքի պատմամշակութային արժեքներին մոտ գտնվելը:

1.16.ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Գյուղատնտեսական նշանակության հողերի բացակայություն.
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմաններ և բարձր սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանք.
- 1988 թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդին հասցված վնասներ, բազմաբնակարան բնակելի շենքերի քայքայված և անբարեկարգ վիճակ.
- Գործազրկության բարձր մակարդակ, համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակ և ցածր կենսապայմաններ.
- Բնակ. պայմանների բարելավման կարիք ունեցող 34 ընտանիքների առկայություն.
- Մշակույթի տան , մանկապարտեզի և գրադարանի շենքերի քայքայված ու անբարեկարգ վիճակ.
- Հանգստի գոտու / պուրակ, այգի / բացակայություն.
- Համայնքապետարանի շենքի բացակայություն.
- Ներհամայնքային ճանապարհների քայքայված ու անբարեկարգ վիճակ.
- Գործազրկության բարձր մակարդակ.
- Երիտասարդ ընտանիքների արտահոսք համայնքից.
- Տեղական բյուջեի սեփական եկամուտների բացակայություն և բյուջեի սահմանափակ հնարավորությունները.

1.17.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տուֆ քարի հանքավայրերի շահագործման ծավալների ավելացման և վերամշակման ճյուղի զարգացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում.
- Բագրավան համայնքի արտեզյան ջրային ռեսուրսների բազայի վրա համայնքի խմելու ջրի խնդրի լուծում.
- Բագրավան համայնքի, համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերից համայնքին հողատարածքներ տրամադրելու միջոցով գյուղատնտեսության / դաշտավարություն, անասնապահություն / ճյուղի զարգացում.
- Անիպեմզայի պոմպակայանի վերագործման միջոցով բնակավայրի ոռոգման և կենցաղային ջրի մատակարարման վերականգնում.

1.18.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԿՏԱՆԳՆԵՐԸ

- Սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանքը.
- Խմելու ջրի բացակայությունը.
- Համայնքի բազմաբնակարան բնակֆոնդի քայքայված և անմխիթար վիճակը.
- Գյուղատնտեսական նշանակության հողերի բացակայությունը.
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի բացակայությունը.
- Մշակույթի տան և մանկապարտեզի վթարային և քայքայված վիճակը.
- Տեղական բյուջեի սեփական եկամուտների բացակայությունը.
- Տեղական բյուջեի սահմանափակ հնարավորությունները.
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը.

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱՋՄԱԿԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ

1.1.Համայնքի ռազմավարությունն է.

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Տուֆ քարի արտադրության և վերամշակման ճյուղի զարգացման միջոցով ավելացնել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից: